




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

Ժնև, 14 սեպտեմբերի 2007թ.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Սեպտեմբերի 14-ին Ժնևում բացվեց միջնադարյան հայկական ձեռագրերի և գրքերի «Հայաստանի մանրանկարները. Մատենադարանի հավաքածուն» ցուցահանդեսը: Ծվեյցարիայի նախագահ Միշլին Բալմի Ռեյի և Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հովանավորությամբ անցկացվող ցուցահանդեսը կազմակերպվել է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի, Մարտին Բոդմեր հաստատության և Ծվեյցարիայում Հայաստանի դեսպանության համատեղ ջանքերով: Բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, Ժնև կանտոնի Խորհրդի նախագահ Շառլ Բեռը, Մատենադարանի տնօրեն

Հրաչ Թամրազյանը, Ծվեյցարիայի դաշնային և Ժնևի կանտոնալ բարձրաստիճան պաշտոնյաներ, Ժնևում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և հավատարմագրված դիվանագետներ:

Ցուցահանդեսը ներկայացնում է Հայաստանի՝ որպես Արևմտքի և Արևելքի խաչմերուկում գտնվող երկրի ներդրումը համամարդկային հոգևոր արժեքների գանձարանում, բացահայտում է կրոնի, փիլիսոփայության, մշակույթի, արվեստի և գիտության հիմնարար ազդեցությունը հայ ժողովրդի ինքնության ձևավորման մեջ:



Յուզանուշների թվում են Մատենադարանի գանձերից Արցախի Ավետարանը (XIVդ.), Տաթևի դպրոցի Ավետարանը (XIVդ.), Գրիգոր Տաթևացու,



Գրիգոր Նարեկացու և Դավիթ Անհաղթի եզակի ձեռագրերը: Լայնորեն է ներկայացված

Կիլիկիայի մանրանկարչության դպրոցը (Ակների Ավետարանը (1287թ.), Սարգիս Պիծակի Արքայական Ավետարանը (1336թ.), Սմբատ Գունատարի Ավետարանը (XIVդ.) և այլն): Ի լրումն, ցուցահանդեսում ներկայացվում են նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանից և Ֆրանսիայի ազգային գրադարանից բերված հայկական ձեռագրեր, այդ թվում և 14-րդ դարի Ալեքսանդրի պատմությունը, որը ոչ-կրոնական մանրանկարչության եզակի նմուշ է:

Ցուցահանդեսի շրջանակներում անցնում է նաև ֆրանսիացի արվեստաբան Ռեժի Լարուրդետի լուսանկարների «Խորհրդապաշտական խաչ» ցուցահանդեսը՝ նվիրված հայկական եկեղեցիներին:

Ցուցահանդեսի հովանավորներն են Հանս Վիլսդորֆ հիմնադրամը, շվեյցարահայ համայնքային հիմնադրամներ և անհատներ, ներառյալ



«Բողոսյան և որդիներ», «Արմենիա», «Փիլիփոսյան» հիմնադրամները, բարերարներ Էդմոնդ և Թալին Ավագյանները, Լուսբարդ Օդյե բանկը: Ցուցահանդեսին օժանդակել է նաև Յուլիուս Բաեր բանկը: Ցուցահանդեսի գիտական կուրատոր և կատալոգի խմբագիրն է Ժնևի համալսարանի հայագիտության պրոֆեսոր Վալենտինա Կալցոլարին: Կատալոգը կազմվել է Մատենադարանի գիտական անձնակազմի մասնակցությամբ:

Ցուցահանդեսը լայնորեն լուսաբանվել է շվեյցարական մամուլում և հեռուստատեսությամբ: “Տրիբյուն դը Ժնև” և “Լը Տան” օրաթերթերն ընդարձակորեն անդրադարձել են հայ ժողովրդի մշակութային ժառանգությանը և պատմությանը: Ցուցահանդեսը տևելու է մինչև դեկտեմբերի 30-ը:



Շվեյցարիայում Հայաստանի դեսպանությունը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր այն կազմակերպություններին և անհատներին, որ իրենց աշխատանքով և մասնակցությամբ հնարավոր դարձրին այս նախաձեռնության իրականացումը:

Տ ե ղ ե կ ա ն ք. Բողմեր գրադարան-թանգարանը հիմնադրվել է շվեյցարացի բարերար Մարտին Բողմերի կողմից 20-րդ դարի կեսերին և հանդիսանում է համաշխարհային խոշորագույն անհատական գրադարաններից մեկը՝ ունենալով 160 հազար հատոր հավաքածու: Այսօր գրադարան-թանգարանի մշտական հավաքածուն պարունակում է վաղ և ուշ միջնադարյան ձեռագրեր, այդ թվում և Նոր կտակարանի մի շարք տեքստերի, մասնավորապես Հովհանի ավետարանի հնագույն պահպանված օրինակները, համաշխարհային դասականների գործերի ձեռագիր բնօրինակներ (Ադամ Սիլտոնի «Դրախտ կորուսյալը», Գյոթե, Բալզակ, Ուիլյամ Բաթլեր Յեյթս, Մարսել Պրուստ և այլն) և առաջին հրատարակություններ (Դանթե, Շեքսպիր և այլն): Թանգարանի կազմակերպած՝ համաշխարհային ժառանգությունը ներկայացնող ցուցահանդեսները լայնորեն լուսաբանվում են եվրոպական մամուլում և հեռուստատեսությամբ:



ՇՎԵՅՏԱՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ